# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

04 փետրվարի 2025 թվականի թիվ 246-Ա

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Գեղեցիկ Միերյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Գեղեցիկ Միերյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Գրիբոյեդովի փողոց թիվ 6 / 1 հասցե / տրամադրել 2025թ. 1-ին եռամսյակի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100դրամ;

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

04 փետրվարի 2025 թվականի թիվ 247-Ա

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Կարեն Հովհաննիսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց, 171 շենք թիվ 9 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը փոխելու մասին, ինչպես նկատի ունենալով, որ բնակարանում չեն կատարվել կոնստրուկտիվ փոփոխություններ, չկա անհրաժեշտություն շինարարության թույլտվության տրամադրման՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց, 171 շենք թիվ 9 հասցեում գտնվող բնակարանի նպատակային նշանակությունը փոխել հասարակական նշանակության, գործառնական նշանակությունը՝ առևտրի սրահի:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 04
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**05 փետրվարի 2025 թվականի թիվ 248-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 20. 01.2025Թ. N 126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 20.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 126-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) «05-004-0303-0001 կադաստրային ծածկագրով 0. 05684հա մակերեսով հողատարածքում 137քմ մակերեսով շինության քանդման աշխատանքները ճանաչել օրինական»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 05
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**05 փետրվարի 2025 թվականի թիվ 249-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Սուրեն Ղազարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 600քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Սուրեն Սոսի Ղազարյանին /ծնված՝ 11.11.1956թ./ պատկանող, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ հողատարածքին կից՝ 120քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Սուրեն Ղազարյանի սեփականության իրավունքը:
2. Սուրեն Ղազարյանին պատկանող 720քմ մակերեսով հողատարածքում 1958թ. կառուցված 124. 58քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 91. 02քմ/, 29. 05քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 13. 35քմ/, 23. 57քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 16. 79քմ/, 42. 29քմ մակերեսով ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 34. 14քմ/ և 1. 71քմ մակերեսով աստիճանահարթակի նկատմամբ ճանաչել Սուրեն Ղազարյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 բնակելի տուն հասցե:
3. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքում 2005թ. կառուցված 10. 91քմ մակերեսով խորդանոցը, 13. 11քմ մակերեսով ծածկը և 1. 10քմ մակերեսով պարիսպը ճանաչել ինքնակամ շինություն:
4. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքում 54. 0քմ մակերոսով շինության քանդման աշխատանքները ճանաչել օրինական:

5. Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքին կից՝ 230քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գեղամա փողոց թիվ 28 /1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով օտարել Սուրեն Սոսի Ղազարյանին՝ հողի կադաստրային արժեքի 30%-ը վճարելու պայմանով /1քմ՝ 866. 25 դրամ/:
6. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
7. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**05 փետրվարի 2025 թվականի թիվ 250-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղ. Սամվել Ղազարյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության վկայագրի Սամվել Ղազարյանին պատկանող, Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 2100քմ մակերեսով հողատարածքը և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Սամվել Հակոբի Ղազարյանին /ծնված՝ 01. 05. 1955թ. / պատկանող, Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղում անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված և փաստացի օգտագործվող 1972.5քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Սամվել Ղազարյանի սեփականության իրավունքը:
2. Սամվել Ղազարյանին պատկանող 1972.5քմ մակերեսով հողատարածքում 1960-1990թթ. կառուցված 93.94քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 87.53քմ/, 46.80քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 27.23քմ/, 1971թ. կառուցված 2,36քմ մակերեսով աստիճանները, 30.43քմ մակերեսով աստիճանահարթակը, 18.51քմ մակերեսով ծածկը, 1986թ. կառուցված 22.94 քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 17.58քմ/, 45.23քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 38.35քմ/, 22.20քմ մակերեսով հացատունը /ներքին մակերեսը՝ 15.29քմ/, 63.75քմ մակերեսով անասնագոմը /ներքին մակերեսը՝ 51.22քմ/, 73.61քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 60.13քմ/, 108.05քմ մակերեսով ծածկը և 6.79քմ մակերեսով պարիսպը ճանաչել Սամվել Ղազարյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք թիվ 7 / 1 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 05
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


# ՈՐՈՇՈՒՄ

**05 փետրվարի 2025 թվականի թիվ 251-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ, ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29. 04. 2021թ. N698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ վարձակալության իրավունքով Անուշ Քաչերյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ, ձկնգետի աջափնյա լճամերձ տարածք հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ 0020654/ մակերեսը, գծային չափերը, երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ ձկնգետի աջափնյա լճամերձ տարածք հասցեում գտնվող անշարժ գույքի մակերեսը, գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 05
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

05 փետրվարի 2025 թվականի թիվ 252-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0. 06750հա մակերեսով հողամասը /գ. Վարսեր/ ճանաչել պետական սեփականություն՝ տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի, 54-55կմ թիվ 83 / 4 հողամաս հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 253-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող 1. 88477հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 15012025-05-0023/, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի ՝

1) առաջին միավոր գույք՝ 0. 30202հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության:

2) երկրորդ միավոր գույք՝ 1. 58362հա մակերեսով գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության:

2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 254-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աիարոն Սահակյանի դիմումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնքի ավագանու՝ 26. 12. 2001թ. նիստի որոշմամբ Աիարոն Սերյոժայի Սահակյանին անհատույց սեփականաշնորհված բնակարանի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն համայնքի ավագանու՝ 26. 12. 2001թ. նիստի որոշմամբ՝ Աիարոն Սերյոժայի Սահակյանին անհատույց սեփականաշնորհված անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Նորաշեն, 4-րդ փողոց, 3-րդ փակուղի, 2 շենք թիվ 3 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պաշտոնական իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 255-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Լուծել Սևանի համայնքապետարանի և «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ջովաբեր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ»-ի միջև՝ 07.04.2016թ. կնքված Սևան համայնք, գ. Ջովաբեր, 7-րդ փողոց թիվ 13 հասցեում գտնվող մսուր-մանկապարտեզի անհատույց օգտագործման պայմանագիրը:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 256-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Գարիկ Հարությունյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 94 հասցեում գտնվող հողատարածքի / վկայական՝ N 14032019-05-0029/ զբաղեցրած 3190.0քմ մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 94 հասցեում գտնվող 389.7 քմ մակերեսով հողատարածքին կից՝ 3190.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում՝ տրամադրելով Սևան համայնք, գյուղ Լճաշեն, 1-ին փողոց թիվ 94 / 1 հողամաս հասցե:
2. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ.Լճաշեն, 1-ին փողոց թիվ 94 հասցեում գտնվող 3190.0քմ մակերեսով հողատարածքն ընդլայնել 200.0քմ մակերեսով / Սևան համայնք, գյուղ Լճաշեն, 1-ին փողոց թիվ 94 / 1 հողամաս հասցե/, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ 1 քմ՝ 792 դրամ, վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
4. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 257-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության ՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1 կետի 6 ենթակետով, հիմք ընդունելով քաղ. Արտաշ Մարգարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Սևան համայնք, ք. Սևան, Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 1-28 հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ N 08022013-05-0254/ զբաղեցրած 0.0039հա մակերեսով տարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 1-28 հասցեում գտնվող 0. 0039 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու նպատակով, Սևան համայնք, ք. Սևան Ա.Գրիբոյեդովի փողոց թիվ 10 / 2 հասցեում գտնվող 0.00162հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 30012025-05-0073/ ուղղակի վաճառքի կարգով՝ հողի կադաստրային արժեքը՝ յուրաքանչյուր 1քմ՝ 4441.8 դրամ, վճարելու պայմանով օտարել Արտաշ Մոլոտի Մարգարյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պաշտաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 258-Ա**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ / ՆՎԻՐԵԼՈՒ / ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 15.10.2024թ. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վարսեր բնակավայրում գտնվող հողատարածքն անհատույց տրամադրելու մասին /նվիրելու/» թիվ N 133-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր, 12-րդ փողոց թիվ 92 հասցեում գտնվող 0.12հա մակերեսով տարածքը /վկայական՝ 30012025-05-0065/ անհատույց սեփականության իրավունքով տրամադրել / նվիրել / Սևան համայնք, գ. Վարսեր, 7-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 18 տան բնակիչ Մերրի Գառնիկի Մարգարյանին:
2. Քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 259-Ա**

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Նորիկ Բալաբեկի Եղիազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի. 15.05.2024թ. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Սևանի ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից կազմված արձանագրության համաձայն՝ քաղաքացուն վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքի /վարձակալության պայմանագիր՝ 17.12.2007թ. N 988 / առկա են շինություններ: «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունը ստացվել է Սևանի համայնքապետարան 13.01.2025 թվականին: Փաստի առթիվ քաղաքացի Նորիկ Եղիազարյանը հրավիրվել է համայնքապետարան, սակայն պարզվել է, որ քաղաքացին մահացել է 2024թ. նոյեմբերի 8-ին: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «ՎԻՎ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կարճել քաղաքացի Նորիկ Բալաբեկի Եղիազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը՝ պայմանավորված անձի մահով, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15-օրյա ժամկետում կամ վարչական դատարան՝ երկու ամսվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 260-Ա**

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 18.10.2024Թ. N 2315-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 18.10.2024թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 2315-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ հետևյալ բառերը «համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ գյուղատնտեսական՝ նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի, վարելահող՝ գործառնական նշանակությունը՝ բնակելի» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 261-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 30.10.2024Թ. N 2404-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 30.10.2024թ. «Անշարժ գույքի սահմանները և մակերեսներն ուղղելու, ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» 2404-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «Սևան համայնք, ք. Սևան, Կոմիտասի փողոց թիվ 4 / 1 հասցեում գտնվող 326.0քմ մակերեսով հողատարածքում» բառերից հետո կարդալ «/վկայական N 06072023-05-0036/» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 262-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով «Արա-Արեգ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Նորաշեն, 8-րդ փողոց թիվ 1 / 4 հասցեում գտնվող /վկայական՝ 16022018-05-0015/ անշարժ գույքի գծային չափերը, երկրաչափական պատկերը և մակերեսը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ «Արա-Արեգ» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Նորաշեն, 8-րդ փողոց թիվ 1 / 4 հասցեում գտնվող հողատարածքի գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 263-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00770հա մակերեսով հողամասը /գ. Լճաշեն/ ճանաչել համայնքային սեփականություն, Սևան համայնք, գ. Լճաշեն, 10-րդ փողոց թիվ 20 / 3 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 264-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և քաղ. Տիգրան Մկրտչյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 842քմ մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղական համայնքի /բնակավայրի/ պարզեցված գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու, հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 842քմ մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել Ծովագյուղ գյուղական համայնքի / բնակավայրի / պարզեցված գլխավոր հատակագծին՝ բնակավայրի՝ նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 7-րդ փողոց թիվ 7 / 1 բնակելի տուն հասցե:
2. Տիգրան Մկրտչյանին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվիհամարին վճարել հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 348836.6 դրամ:
3. Օրինական ճանաչել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 7-րդ փողոց թիվ 7 / 1 հասցեում գտնվող հողատարածքում կառուցված 294.23քմ մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ համայնքի բյուջե մուծելով օրինականացնելով յուրաքանչյուր 1քմ համար՝ 874դրամ:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2025 թվականի թիվ 265-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25-րդ, 28-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Գագիկ Շահբազյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 2 բազմաբանկարան շենքի սեփականատերերին անհատույց տրամադրված հողատարածքում ինքնակամ կառուցված 66.8քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ առկա է սեփականատերերի համաձայնությունը, ավտոտնակը կառուցված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չունեցող հողատարածքի վրա, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, **որոշում եմ.**

1. Գագիկ Լևոնի Շահբազյանի կողմից Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 2 շենք, 14 բնակարանին կից ինքնակամ կառուցված 66.8քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 55.2քմ/ ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե վճարելով օրինականացվող յուրաքանչյուր 1քմ՝ 262.2դրամ:
2. Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 2 շենք, 14 հասցեում գտնվող բնակարանի բաժնեմասը 0.1956հա մակերեսով հողամասի նկատմամբ սահմանել 66.8/1560.16 բաժնեմաս՝ համայնքի բյուջե վճարելով բաժնային սեփականություն հանդիսացող 66.8քմ մակերեսով հողատարածքի յուրաքանչյուր 1քմ- համար՝ 514.8 դրամ:
3. Գագիկ Շահբազյանի կողմից՝ Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 2 շենք, 14 բնակարանին կից ինքնակամ կառուցված 66.8քմ մակերեսով ավտոտնակը /հաշվառման տեղեկանք՝ 2023WTDGRV/ ճանաչել օրինական:
4. Օրինական ճանաչել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 2 շենք, 14 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքում առկա ինքնակամ կառույցը:
5. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 266-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սևակ Պետրոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 16 / 6 , Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 18 / 1-1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայական՝ 02062023-05-0001, 23102024-05-0009/ միավորելու և միավորված անշարժ գույքերի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 16 / 60, Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց 18 / 1-1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ս.Սևանեցու փողոց թիվ 16 / 60 խանութ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**06 փետրվարի 2025 թվականի թիվ 267-Ա**

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Օֆիկ Խաչատրյանի լիազոր անձ Լուսինե Խաչատրյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Չկալովկա հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1056725, տրված՝ 30.04.2004թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Չկալովկա հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Չկալովկա 4-րդ փողոց թիվ 6 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 06
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

## ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 268-Ա**

## ԳՈՒՄԱՐ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով, նկատի ունենալով, որ Սևակ Սամվելի Հարությունյանը համայնքի տարածքում շինարարության ավարտը փաստագրելու համար 10000 դրամ սխալմամբ վճարել է բանկի միջոցով, սակայն անհրաժեշտ է վճարումը կատարել քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի բյուջե վճարված 10000 /տասը հազար/ դրամ տեղական վճարը հետ վերադարձնել Սևակ Սամվելի Հարությունյանին / h/h 1630010000219/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 269-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 31.01.2025Թ. N206-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 31.01.2025թ. «Հողհատկացման հիմքերը վերակագնելու մասին» 206-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «կադաստրային արժեքը» բառերից հետո կարդալ «1քմ՝ 4441.8 դրամ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**

# ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 270-Ա**

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ N 2-6 եզրակացությունը, հիմք ընդունելով քաղ. Կամո Սաղաթելյանի դիմումը՝ կառուցապատման իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 31 / 2 հասցեում գտնվող 822.94քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Կառուցապատման իրավունքով Կամո Զավենի Սաղաթելյանին պատկանող, 822. 94քմ մակերեսով բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակություն ունեցող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
2. Կառուցապատման իրավունքով Կամո Սաղաթելյանին պատկանող, Սևան համայնք ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 31 / 2 հասցեում գտնվող 822.94քմ մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Կամո Սաղաթելյանին՝ հողի կադաստրային արժեքը /1քմ- 2887.5 դրամ/ վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

07 փետրվարի 2025 թվականի թիվ 271-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 20.01.2025Թ. N 127-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 20.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 127-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Սևան համայնք, գ. Գագարին, Թումանյան փողոց թիվ 8 / 4 հողամաս հասցե» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք, գ. Գագարին, Հ. Թումանյան փողոց թիվ 2 / 4 հողամաս հասցե» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

07 փետրվարի 2025 թվականի թիվ 272-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 13.01.2025Թ. N 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 13.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 75-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ հետևյալ բառերը «համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ գյուղատնտեսական՝ նպատակային, արոտավայր՝ գործառնական նշանակություն հողերից՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված՝ գործառնական նշանակության հողատարածքի» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 273-Ա**

### ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 08.01.2025Թ. N 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 08.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 23-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) « ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ հետևյալ բառերը «համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ գյուղատնտեսական՝ նպատակային, վարելահող՝ գործառնական նշանակությունից՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության հողատարածքի» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք**
**ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am**


## ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 274-Ա**

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 25.05.2023Թ. N 674-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 25.05.2023թ. «Անշարժ գույքը համայնքային սեփականություն ճանաչելու և հասցե տրամադրելու մասին» N 674-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ հետևյալ բառերը «փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական՝ գործառնական նշանակության հողատարածքի» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

07 փետրվարի 2025 թվականի թիվ 275-Ա

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 08.01.2025Թ. N 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 08.01.2025թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 22-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ հետևյալ բառերը «համապատասխանեցնել Լճաշեն բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները՝ գյուղատնտեսական՝ նպատակային, վարելահող՝ գործառնական նշանակությունից՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության հողատարածքի» բառերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

**07 փետրվարի 2025 թվականի թիվ 276-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ, ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ վարձակալության իրավունքով Արայիկ Խաչատրյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ գ. Ջովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 944112, տրված՝ 05.09.2002թ./ մակերեսը, գծային չափերը, երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ գ. Ջովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի մակերեսը, գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

07 փետրվարի 2025 թվականի թիվ 277-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով Ժենյա Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 1-16 և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 1-16 հասցեներում գտնվող անշարժ գույքերի /վկայականներ՝ 27052024-05-0058 և 22052024-05-0084/ գծային չափերը և երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 1-16 և Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 181 / 1-16 հասցեներում գտնվող անշարժ գույքերի գծային չափերը և երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի փետրվարի 07
ք.Սևան